

Պիլլահի (904—932) ճոխ կահաւորուած պալատին մէջ «պատերէն կախուած գորգերուն թիւը 22 հազարի կը հասնէր, բացի անոնցմէ՝ որ գետինը փոսուած էին կոխկոտուելու համար»⁽⁵¹⁾։ Ասիկա կը կատարուէր 917ին, երբ Բիւզանդական զեապանները կ'ընդունուէին։ Այ Սիււթի Արար պատմիչն ալ նոյնը կը կրկնէ։

Անտարախոյս յատկապէս բուրդ գորգերը Հայաստան էր որ կ'արտադրէր Արար Սալիֆալթեանց։ Ինչպէս տեսանք, Հայաստանն ատոնք կու տար իբր բնահարկ նոյնիսկ է դարուն։ Հայաստանէն գորգեր կը տարուէին, ըստ Հայ պատմիչներու, իբր նուէր եւ իբր կողոպտ։ Հայկական Վիշապ առաջին գորգը, Կրաֆի գորգ, յայտնուեցաւ Դամասկոսի մզկիթէ մը բերուելով եւ ներկայացուեցաւ 1908ին՝ եւրոպացի գեղադէպներու։

Անտարախոյս զուգադիպութիւն չէ սա հետաքրքրական կէտը։ Սալիֆալթեան անկումով՝ Պաղտատի մէջ թէ Եգիպտոս գորգարուեստն ալ կը դադրի։ Ուրեմն գորգարուեստը բնիկ արուեստ մը չէր Եգիպտոսի, Սիւրիոյ եւ Պաղտատի համար, ուր սակայն մեծագոյն գորգի հաւաքածոներուն գոյութիւն ունեցած ըլլալը կը պատմուի մեզի։ Սալիֆալթեանները պարզապէս սպունդներ էին արուեստով ուսնացող հպատակ ժողովուրդներու, սակայն երբ այլեւս ջուրը իր ալէն դադրեցաւ՝ սպունդն ալ դադրեցաւ իր ուսնացումէն եւ հուսկ չորցաւ։ Նոյնը նաեւ թրքական սուլթանութեան համար։ Պէտք է դարձեալ դիտել տալ որ Սելճուքները մինակ տիրապետող եւ արշաւող զասակարգ մ'էին, որոնց արուեստի եւ մշակոյթի մնացորդները բոլորովին կը պատկանէին հպատակեցուած կամ վարձկան ոչ — Սելճուք տարրերու։ Ինչ որ կրնանք վերադրել Սալիֆալթեան եւ Սուլթանութեան՝ պարզապէս իրենց զանազան արուեստներու եւ մրջակոյթներու պատուաստումները եւ խառնուրդներն են, որոնցմով անոնք պատրաստեցին մշակոյթի ակնապարար խճանկարներ, թէեւ ի մեծ դին տրամադրող ժողովուրդներու մշակոյթին։

Տր. Ֆ. Ռ. Մարթին կ'եզրակացնէ, որ «Սալիֆաներու ժամանակ Հայաստան նկատուած էր քաջ ծանօթ եւ նոյնիսկ նշանաւոր կեդրոն մը հիւսուածեղէններու ճարտարարուեստին, որովհետեւ յիշատակութիւնները կ'ըսեն որ Սիւլթի մէջ, Եգիպտոս, բազմաթիւ գեղեցիկ մանրչակագոյն կերպասներ կը շինուէին, նման Հայաստան շինուածներուն»⁽⁵²⁾։ Ինծի ծանօթ է Իպն Հաուլալի (902—968) վկայութիւնը, թէ «Թէյլիպ (Պուզիստան) յիշատակելի է իր դօտիներու արտադրութեանց համար, անոնք Ռումի մէջ շինուածներուն նման են, եւ ոչ մէկ տեղ անոնց հաւասարը կը գտնուի բացի Հայաստանէն»⁽⁵³⁾։ Անտարախոյս նման շատ վկայութիւններ կան մեզի ցոյց տուող, թէ

(51) Անդլ. թարգմ. հատոր Ա, էջ 157։

(52) Oriental rugs, etc., p. 7.

(53) Oriental Geography. — London, 1800.